200 ՀԱՅԵՐ ՑՈՅՑ ԵՆ ԱՆՈՒՄ ՎԱՇԻՆԳՏՈՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ԱՌԱՋ

Աւելի քան 200 հայեր Մայիսի 4ին ցոյց արեցին Վաշինգտոնի խորհրդային դեսպանատան առաջ, բողոքելով հայկական Գետաշէն եւ Մարտունաշէն գիւղերի դէմ կատարուող բռնարարքների դէմ: Բողոքի ցոյցի ընթացքում, որ կազմակերպել էր Հ.Յ.Դ. Հայ Դատի յանձնախումբը, յանձնախմբից մի պատուիրակութիւն դեսպանատանը հանդիպում ունեցաւ խորհրդային պատասխանատուների հետ, ներկայացնելով հայկական համայնքի պահանջները ներկայիս իրավիճակի նկատմամբ՝

Ա.-Թոյլ տալ, որ սննդեղէն, դեղօրայք եւ բժշկական օժանդակութիւն հասնի պաշարեալ շրջան:

Բ.-Խնդրոյ առարկայ հայկական գիւղերից հեռացնել խորհրդային եւ ադրբեջանական ուժերը, յատկապէս նկատի ունենալով, որ դրանց ներկայութիւնը վտանգաւոր է տեղի բնակիչների կեանքի համար:

Գ.-Հետաքննել եւ լուսաբանել խորհրդային եւ ադրբեջանական ռճրային արարքները, եւ դատի կանչել յանցագործներին:

Դ.-Պաշտօնական ներողութիւն յայտնել Հայաստանի կառավարութեանը խորհրդային զօրքերի գործած արարքների համար:

Նշենք, որ Հ.Յ.Դ. Հայ Դատի յանձնախմբի պատուիրակութիւնը զգուշացրեց դեսպանատան պաշտօնատարներին, յայտնելով, թէ ցոյցերը շարունակուելու են այնքան ժամանակ, քանի դեռ խորհրդային պատուիրակութիւնը պատասխան չի տուել վերոնշեալ պահանջներին: